

ՀՀ Արմավիրի մարզի Արտաշարի գյուղապետարանը
հայտարարում է մրցույթ գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղարի/ծածկագիր 1-2-1/
համայնքի ծառայության թափուր պաշտոնը
զբաղեցնելու համար:

1. Աշխատակազմի քարտուղարը՝

Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ-ի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը: Լուծում է աշխատակազմի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրները, ընդունում որոշումներ: Աշխատակազմում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը: Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է այլ մարմիններում կազմակերպված նիստերին/խորհրդակցություններին/: Կատարում է համայնքի ղեկավարի հանձնարարականները:

2. Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների երկրորդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում, առնվազն 2 տարվա ստաժ կամ առնվազն 5 տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2 դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան/կոչում/ կամ վերջին 4 տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին 8 տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն 3 տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3. Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2013թ. մայիսի 30-ին ժամը 15⁰⁰-ին Արտաշարի գյուղապետարանում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով/ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/:
Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:

Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ. մարտի 3-ի N310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, ինչպես նաև դատական կարգով չի ճանաչվել անգործունակ և սահմանափակ գործունակ:

Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային, տեղամասային կցագրման վկայականի պատճեններ:

Մեկ լուսանկար 3X4 չափսի:

Անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արմավիրի մարզի Արտաշարի գյուղապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն/հասցեն՝ ք.Արմավիր Աբովյան 71, հեռ. 0237-2-07-70/: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10⁰⁰ – 16⁰⁰ բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013թ. մայիսի 21-ը: